

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

25. 08. 2021թ.

ԱԲՀ-ի կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման գործող մեխանիզմներից են ԱԲՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2012 թվականից իրականացվող հարցումները:

2021 թվականի հուլիս ամսին Ուսումնական մասի վարիչի և Որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից 2020-2021 ուստարվա շրջանավարտների շրջանում իրականացվեցին առցանց հարցումներ՝ 12.03.2021թ. գիտխորհրդի կողմից հաստատված ԱԲՀ-ի շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցման կազմակերպման, անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կանոնակարգի և նրան կից ներկայացված համապատասխան հարցաթերթի համաձայն:

Հետազոտության նպատակներն են՝

1. Բացահայտել և գնահատել ԱԲՀ շրջանավարտների բավարարվածության մակարդակը կրթության որակից:
2. Կատարելագործել կրթական գործընթացները և ապահովել որակյալ կրթություն:

Հարցման գործընթացի կազմակերպումը

2020-2021 ուստարվա ԱԲՀ-ի Ստոնատոլոգիական ֆակուլտետի 5-րդ և Բուժական ֆակուլտետի 6-րդ կուրսերի շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության հարցումներն անցկացվել են առցանց՝ Google Forms ծրագրով: Հարցումը կազմակերպվել է ավարտական ամփոփիչ քննություններից անմիջապես հետո՝ հուլիս ամսին:

Հարցաշարը լրացվել է անանունության սկզբունքով:

Հարցմանը մասնակցել են 2020-2021 ուստարվա 18 շրջանավարտները, և հաշվի առնելով նրանց թվաքանակը, հարցման անցկացումը և արդյունքների մշակումը չի կազմակերպվել ըստ ֆակուլտետների՝ առանձին-առանձին:

Նշենք, որ մինչ այդ ԱԲՀ շրջանավարտների ստացած կրթությունից բավարարվածության հարցումներն անցկացվել են միայն թղթային տարբերակով:

Հարցաթերթերը և հարցման կանոնակարգը կից ներկայացված են համապատասխանաբար հավելվածներ 1- 2-ում:

Շրջանավարտների կողմից գնահատվել են կրթական գործընթացի մի շարք հիմնական բաղադրիչներ՝

- ա) կրթական
- բ) օժանդակ
- գ) վարչական

Կրթական բաղադրիչի շրջանակում ԱԲՀ շրջանավարտները գնահատել են իրենց բավարարվածությունը ստացած տեսական գիտելիքներից և գործնական հմտություններից, մասնագիտական կարողություններից, պրակտիկաների օգտակարությունից, գիտելիքների գնահատման օբյեկտիվությունից, ինչպես նաև ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից:

Օժանդակ բաղադրիչի շրջանակում շրջանավարտները գնահատել են իրենց բավարարվածությունը լսարանային պայմաններից, լաբորատորիաների կահավորանքից, գրադարանից, համացանցի մատչելիությունից:



Վարչական բաղադրիչը ներառել է ԱԲՀ ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությունը, ուսանողական կառույցների գործունեությունը, ինչպես նաև ուսանողների բողոքներին և դիմումներին արձագանքելու ընթացակարգը:

Շրջանավարտները նաև տվել են իրենց ստացած կրթության ընդհանուր գնահատականները: Բացի այդ, հաշվի են առնվել շրջանավարտների առաջարկները կրթական գործընթացի բարելավման վերաբերյալ «բաց հարցի» մեթոդական տեխնիկայի միջոցով՝ նրանց հնարավորություն տալով ազատ շարադրել իրենց կարծիքը:

Հարցման արդյունքների ամփոփում

Հարցումների արդյունքներն, ամփոփվելով Ուսումնական մասի վարիչի և Որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից, ներկայացվում են ստորաբաժանումներին (Ֆակուլտետ, ամբիոն)՝ առաջիկա նիստերում քննարկելու և 10 օրվա ընթացքում տվյալ վերլուծության վերաբերյալ բարելավման առաջարկություններ, դիտարկումներ ներկայացնելու Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորին: Հարցումների արդյունքների վերաբերյալ առաջարկությունները ամփոփվում են ՈԱ և ԿԲ պրոռեկտորի կողմից զեկույցի տեսքով և քննարկվում ԱԲՀ գիտական խորհրդի նիստում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ինչպես երևում է գրաֆիկական պատկերից, այս տարվա 18 շրջանավարտներից ընդամենը 3-ն են իգական սեռի ներկայացուցիչներ, 15-ը արական սեռի ներկայացուցիչներ են: Նշենք, որ բոլորն էլ օտարերկրյա ուսանողներ են. նրանցից 12-ը՝ Իրաքից են, 2-ը՝ Հնդկաստանից, 2-ը՝ Հորդանանից, 2-ը՝ Իրանից:


Շրջանավարտների թվում ունենք 18-23 տարեկան 3 ուսանող, 24-29 տարեկան՝ 12 ուսանող և 3 ուսանող էլ՝ 30-35 տարեկան: Այսինքն, Ավանդական բժշկության համալսարանը

թողարկել է բավականին տարբեր տարիքային խմբերի և ազգային պատկանելության շրջանավարտներ:




ԱԲՀ-ի 2020-2021 ուստարվա 18 շրջանավարտներն էլ մասնակցել են հարցմանը՝ ապահովելով 100% մասնակցություն:


2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ




Այն հարցին, թե Ձեզ համար պա՞րզ էր կրթական ծրագրի նպատակը, հարցված շրջանավարտներից 13-ը դրական պատասխան է տվել՝ նշելով այդ տարբերակը, 4 ուսանող տվել է մասամբ այդ պատասխանը և 1 հոգի չի պատասխանել: Դիմորդները ԱԲՀ-ի իրենց նախընտրած կրթական ծրագրի նպատակներին, բովանդակությանը ծանոթանում են Համալսարանի պաշտոնական կայքից, որը պարբերաբար թարմացվում է:



Ինչպես ցույց տվեցին հարցման արդյունքները, կրթական ծրագրի վերջնարդյունքները պարզ էին ու հասկանալի հարցմանը մասնակցած ուսանողների 66.7 %-ին, 27.8 %-ին այն մասամբ էր պարզ ու հասկանալի, իսկ 5.6 %-ին այն պարզ չէր:




Այստեղ 1 ուսանող՝ 5.6 %-ը դժվարացել է պատասխանել, հարցվածների 50 %-ը պատասխանել է, որ մասամբ են ներկայացվել դասընթացի նպատակն ու խնդիրները, իսկ ըստ հարցվածների 44.4 %-ի՝ իրենք իրազեկվել են, թե մատուցվող դասընթացի շրջանակում ինչ են սովորելու:




Ձեզ համար պարզ էր, թե ինչ էին ակնկալում ձեզանից դասախոսները հարցին, հարցվածների 72.2 %-ը պատասխանել է այո, 22.2 %-ը պատասխանել է մասամբ, իսկ 5.6 %-ը դժվարացել է պատասխանել:


Եթե կրթական վերջնարդյունքները հստակ սահմանում են, թե ինչ է սովորելու ուսանողը դասընթացի (կամ ծրագրի) շրջանակում և շարադրվում են ուսանողի տեսանկյունից, ապա դասընթացի նպատակը ձևակերպվում է դասախոսի տեսանկյունից և ցույց է տալիս, թե ինչ է պատրաստվում սովորեցնել դասախոսը ուսանողին դասընթացի (կամ ծրագրի) շրջանակում: Հետևաբար, շատ կարևոր է, երբ ուսանողը դասընթացի մեկնարկին տեղեկանում է դասընթացի նպատակների ու վերջնարդյունքների մասին: Դասընթացի կրթական վերջնարդյունքները ուսանողին հնարավորություն են տալիս տեղեկանալու, թե նա ինչ պետք է իմանա, հասկանա և կարողանա անել դասընթացի ավարտին և, միննույն ժամանակ, մատնանշում են, թե հատկապես ինչպե՞ս է նա գնահատվելու:




Հարցված ուսանողների 77.8 %-ը գտնում է, որ ուսումնառությունը նպաստել է Համալսարանում տեսական գիտելիքների ձեռքբերմանը, իսկ նրանց 22.2 %-ը պատասխանել է, որ մասամբ է նպաստել:




Ուսումնառությունը համալսարանում նպաստե՞լ է մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը հարցին այո է պատասխանել հարցվածների 55.6%-ը, ոչ՝ 22.2 %-ը և նույնքանն էլ պատասխանել են՝ մասամբ՝ այո: Չնայած մեծամասնությունը դրական է գնահատել մասնագիտական կարողությունների ու հմտությունների ձեռքբերումը Համալսարանի կողմից ստեղծված նպաստավոր պայմանների շնորհիվ, այնուամենայնիվ, հարկավոր է մշտապես ուշադրության կենտրոնում պահել ուսումնառության արդյունքների, հատկապես՝ պրակտիկաների գնահատման մեթոդները, չափանիշները:




Ըստ հարցման արդյունքների՝ հարցվածների 61.1 %-ը գոհ է դասախոսների հետ հետադարձ կապից, այն օգնել է բարելավելու իրենց գիտելիքներն ու կարողությունները, 33.3 %-ը մասամբ է գոհ, իսկ 5.6 %-ը, չգիտես ինչու, դժվարացել է պատասխանել:




Հարցված ուսանողների 64.7 %-ը հաստատել է, որ կրթական կարիքների վերհանման և բավարարման նպատակով ստացել է աջակցություն, 35.3 %-ը պատասխանել է, որ մասամբ է օգտվել այդ աջակցությունից, իսկ 5.6 %-ը պատասխանել է՝ ոչ:



Հարցվածների 6.7 %-ը գտնում է, որ ուսումնառությունն ԱԲՀ-ում նպաստել է իրենց կլինիկական մտածելակերպի ձևավորմանը, 16.7 %-ը կարծում է, որ մասամբ է այն նպաստել, 5.6 %-ի կարծիքով այն չի նպաստել, իսկ 11.1 %-ը դժվարացել է պատասխանել:




Պարզելու համար, թե արդյոք Համալսարանը զարգացրել է իր շրջանավարտների հաղորդակցական և կազմակերպչական կարողությունները, որոնք ճիշտ է նրա մասնագիտական կարողություններին չեն վերաբերում, սակայն շատ են օգնում աշխատանքում և կարիերայում, ստացել ենք հետևյալ պատասխանները՝ 77.8 %-ի կարծիքով՝ այո զարգացրել է, 16.7 %-ի կարծիքով՝ մասամբ է զարգացրել այդ կարողությունները, իսկ 5.6 %-ի կարծիքով՝ չի զարգացրել:



Պրակտիկան ցանկացած մասնագիտական ուսումնական հաստատության, առավել ևս բժշկական համալսարանի կրթական ծրագրերի պարտադիր և կարևոր բաղադրիչն է, որի օգտակարությունը հարցված շրջանավարտների 27.8 %-ը գնահատել է գերազանց, 33.3 %-ը՝ լավ, բավարար՝ 27.8 %-ը, անբավարար՝ 5.6 %-ը և նույնքան էլ, իսկ ավելի կոնկրետ մեկ ուսանող դժվարացել է պատասխանել:


ԱԲՀ-ն պատրաստվում է նաև ուսանողների շրջանում անցկացնել պրակտիկայից բավարարվածության հարցումներ:




Մեզ հետաքրքիր էր նաև համալսարանի ուսույանում ներառված «Ավանդական բժշկություն» կրթամասի առարկաների (ֆիտոթերապիա, ասեղնաբուժություն, հոմեոպաթիա, ...) նկատմամբ ուսանողների վերաբերմունքը, քանի որ այս առարկաների դասավանդմամբ ԱԲՀ-ն տարբերվում է բժշկական կրթություն իրականացնող այլ բարձրագույն ուսումնական հաստատություններից, և բացի այդ, Համալսարանի ուսումնական գործընթացը նպատակաուղղված է նոր որակի բժիշկ-մասնագետների պատրաստմանը, ովքեր 21-րդ դարի բժշկությունը կզարգացնեն ժամանակակից և ավանդական բժշկության ինտեգրման ուղիով:

Ցավոք, այս հարցադրումից պարզ դարձավ, որ հարցվածների 27.8%-ն է հետաքրքրված եղել այդ դասընթացներով, 55.6 %-ին չի հետաքրքրել, 11.1 %-ին այն մասամբ է հետաքրքրել, իսկ 5.6 %-ը դժվարացել է պատասխանել:


Այստեղ խնդիր է առաջանում պարզել, արդյո՞ք մեր դիմորդները չեն ծանոթանում կրթական ծրագրի բովանդակությանը, այսինքն, այն թե ինչ դասընթացներ են ուսումնասիրելու ուսումնաստության ընթացքում: Եվ բացի այդ, անհրաժեշտություն է առաջանում ուսումնական մասի կողմից իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ավանդական բժշկության ամբիոնում նշված առարկաների դասավանդման դրվածքը:




Քանի որ տվյալ հարցի օգնությամբ կարողացել ենք պարզել, թե որքանով էր հավասարաչափ բաշխված ուսանողի ուսումնական բեռնվածությունը՝ ըստ տարիների, որքանով էր իրատեսական նրանց հանձնարարվող առաջադրանքների կատարման ժամկետները, հետևաբար, ըստ մեծամասնության պատասխանների, կարելի է ենթադրել, որ այն ինչ որ չափով համաչափ է եղել: Սակայն, մի փոքր մեթոդական խնդիր ենք տեսնում այստեղ. հարցը կարելի էր ձևակերպել այնպես, որպեսզի կարողանայինք պարզել նաև ուսումնական պլանի կազմման, այսինքն՝ առարկաների ուսումնասիրման հաջորդականության, առարկաների ռացիոնալ բաշխման, կրեդիտների հատկացման հետ կապված խնդիրները:




Ուսանողների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը փաստել են հարցվածների 83.3 %-ը: 11.1 %-ի կարծիքով գիտելիքի գնահատումը մասամբ է եղել օբյեկտիվ: Գրեթե բոլոր հարցումներում, այնպես էլ այստեղ ունենք մեկ ուսանողի կողմից բացասական պատասխան:



Գիտելիքի ստուգման և գնահատման կիրառվող ձևերի վերաբերյալ հարցվածների մեծամասնությունը դրական է պատասխանել, հետևաբար դասախոսների կողմից ընտրված վերջնարդյունքների գնահատման մեթոդները թվում է դժգոհություններ չեն առաջացրել շրջանավարտների շրջանում:




Առաջարկվել է նաև գնահատել գիտելիքի գնահատման համակարգն ընդհանուր առմամբ և, ըստ ստացված պատասխանների, ունենք ընդամենը 1 ուսանողի կողմից բացասական գնահատական:



Իսկ ամփոփիչ ատեստավորման գնահատականի առնչությամբ ունենք հարցվածների 100 %-ի դրական պատասխանը, ինչը շատ ուրախալի է:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԲՀ –Ի ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ



3.1. կետում ներառված հարցը հետևյալն է՝ ինչպե՞ս եք գնահատում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան (լսարաններ, լաբորատորիաներ, մասնագիտական սենյակներ, նախակլինիկական սենյակ, գրադարան, ուսումնառության այլ ռեսուրսներ):

3.2. կետում ընդգրկել ենք՝ ինչպե՞ս եք գնահատում մասնագիտական գրականության առկայությունը գրադարանում հարցը:

3.3. կետով տրվում է՝ ինչպե՞ս եք գնահատում ինտերնետ ռեսուրսների առկայությունը Համալսարանում հարցը:

3.4. կետով ցանկացել ենք պարզել՝ ինչպե՞ս են գնահատում ուսումնական լաբորատոր սարքավորումների և նյութերի առկայությունը:

Այս հարցերին պատասխանել են 2-5 գնահատականներով:

Այսպես՝ նյութատեխնիկական բազայից բավարարվածությունը 35.3 %-ը գնահատել է 5, 23.5 %-ը՝ 4, 29.4 %-ը գնահատել է 3 և 11.8 %-ը՝ 2:

Մասնագիտական գրականության առկայությունը գրադարանում հարցվածների 41.2 %-ը գնահատել է 5, 29.4 %-ը՝ գնահատել է 4, 17.6 %-ը՝ 3 և 11.8 %-ը՝ 2: Այսինքն, մոտ 70 %-ը լավ և գերազանց է գնահատել մասնագիտական գրականության առկայությունը

գրադարանում: Հավելենք, որ ընթացիկ ուստարում այն հատկապես էլեկտրոնային ռեսուրսներով համալրելու և հարստացնելու քայլեր ու միջոցառումներ են ձեռնարկվել՝ նկատի ունենալով նաև ուսանողների շրջանում նախկինում անցկացված հարցումները:


Ինտերնետ ռեսուրսների հասանելիությունը հարցվածների 31.3 %-ը գնահատել է գերազանց, նույնքանը՝ լավ, 25 %-ը՝ բավարար, 12.5 %-ը՝ անբավարար:

Ինչպե՞ս եք գնահատում ուսումնական լաբորատոր սարքավորումների և նյութերի առկայությունը Համալսարանում հարցին պատասխանելիս հարցվածների 23.5 %-ը ընտրել է գերազանց գնահատականի տարբերակը, 35.3 %-ը՝ լավ, 17.6 %-ը՝ բավարար և 23.5 %-ը անբավարար: Այսինքն, չնայած գերազանց և լավ գնահատականներին /59%/, այնուամենայնիվ, հարկավոր է վերանայել Համալսարանում առկա լաբորատոր սարքավորումների և նյութերի առկայությունը, կիրառելիությունն ու հասանելիությունը:

3.5. կետով ձևակերպված ի՞նչը կոնկրետ ձեզ չի բավարարել ուսումնական գործընթացում՝ կապված նյութատեխնիկական բազայի հետ հարցին, եղել են հետևյալ պատասխանները՝

- ✚ Ամեն ինչ հիանալի էր (7 ուսանող)
- ✚ Մենք ուսումնասիրեցինք անգլերեն լեզվով հիմնավորված հղումներ, հին ռուսերեն հղումները լավ չէին, հատկապես թարգմանությունը (3 ուսանող)
- ✚ Ինձ համար՝ որպես ատամնաբույժի, պրակտիկական բավարար չէր, քանի որ աշխատելու նյութ և ֆանտոմ չունեինք, և դա վատ է, քանի որ պրակտիկայի լավ արդյունքներ չստացանք (5 ուսանող)
- ✚ Վիրաբուժությունը (3 ուսանող)

Այստեղից ևս պարզ է, որ նյութատեխնիկական ռեսուրսները վերանայելու կարիք կա՝ հատկապես, ինչպես նշել են ստոմատոլոգները, ֆանտոմների և դրանց վրա անհրաժեշտ նյութերով աշխատելու պրակտիկայի կարիք են ունեցել:




Այն հարցին, թե ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի դասավանդման մակարդակը, ստացել ենք հետևյալ պատկերը՝ հարցվածների 44 %-ը գնահատել է գերազանց, 25 %-ը՝ լավ, նույնքանը՝ բավարար և 6 %-ը՝ անբավարար: Այստեղ դարձյալ մեկ ուսանողի կողմից ունենք անբավարար գնահատական:


3.7. կետով ընդգրկել ենք «բաց հարց». ի՞նչը կոնկրետ Ձեզ չի բավարարել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում և ստացել ոչ միայն նրանց կրթական կարիքներին վերաբերող պատասխաններ, այլ նաև՝ գոհունակության:

- ✚ Ամեն ինչ պարզ էր ու հրաշալի (7 ուսանող)

- ✚ Կրկնվող քննություններ ստոմատոլոգիական ֆակուլտետում և նյութի բացակայություն (7 ուսանող)
- ✚ Գործնական մասը, որն այդքան կարևոր էր ստոմատոլոգիայում (4 ուսանող):



Այստեղ գրաֆիկից պարզ է, որ շրջանավարտների մոտ 78 %-ը գոհ է թե՛ ղեկավարությունից, թե՛ դասախոսական կազմից և թե՛ ուսանողական կառույցներից:




3.9. Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հանդիպել էք ակադեմիական անազնվության դրսևորումների (դրամի դիմաց կամ բարեխոսությամբ ստացել էք գնահատական) հարցադրմանը հարցվածների 25 %-ը չի պատասխանել, 62.5 %-ը պատասխանել է ոչ, իսկ 12.5 %-ը դժվարացել է պատասխանել:

3.10. Արդյո՞ք հստակ և թափանցիկ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները հարցին 71.4 %-ը պատասխանել է այո, 7.1 %-ը՝ ոչ, 14.3 %-ը մասամբ այո, 7.1 %-ը՝ դժվարացել է պատասխանել:

3.11. Կարևորում էք համալսարանում սովորելիս հանրակացարանի առկայության խնդիրը հարցին սովորողների 43.8 %-ը պատասխանել է այո, 18.8 %-ը՝ մասամբ այո, 31.3 %-ը՝ ոչ, իսկ 6.3 %-ը դժվարացել է պատասխանել: Առնվազն 2 տարուց շրջանավարտների մեծամասնության ցանկությունը կկատարվի և արդեն հաջորդ սերունդները, հատկապես եթե օտարերկրյա ուսանողներ կլինեն, կկարողանան օգտվել Համալսարանի կացարանի բարեկեցիկ պայմաններից:


4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ



Ինչպես տեսնում ենք վերոնշյալ գրաֆիկում, ԱԲՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը հաստատել է հարցվածների 81.3 %-ը՝ պատասխանելով՝ այո, 18.8 %-ը՝ պատասխանել է մասամբ:


Իսկ այն հարցին, թե ԱԲՀ-ի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը, հարցվածների 81.2 %-ը պատասխանել է այո, 12.5 %-ը՝ մասամբ այո, 6.3 %-ն էլ դժվարացել է պատասխանել:

5. ԱԲՀ-ՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ



Այս հարցին, թե որքանո՞վ էք բավարարված ԱԲՀ-ից ստացած կրթությունից, հարցվածների 44 %-ը պատասխանել է ավելի, քան բավարարված եմ, 44 %-ը՝ ամբողջությամբ բավարարված եմ, 13 %-ը դժվարացել է պատասխանել, իսկ 6 %-ը ընտրել է պատասխանի ավելի, քան բավարարված չեմ տարբերակը:

ԱԲՀ-ն ելնելով իր ռազմավարությունից և տեսլականից՝ մշտապես կատարելագործում է կրթական գործընթացները, հետևաբար, վերհանելով ուսանողների ակնկալիքները կրթական ծրագրից, համալսարանի մատուցած ծառայություններից, համալսարանը կկարողանա խթանել թե՛ դիմորդների հոսքը և թե՛ մրցակցությունը բուհերի շրջանակում:



Ուրախալի է, որ շրջանավարտների 65 %-ը պատրաստ է խորհուրդ տալ իր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԱԲՀ և չունենք գեթ մեկ բացասական պատասխան:

5.3. Նշեք ԱԲՀ-ում ստացած կրթության ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ կողմերը	Թույլ կողմերը
<ul style="list-style-type: none"> Վարչական աշխատակազմ 	Ինձ համար ոչինչ թույլ չէր
<ul style="list-style-type: none"> Ամեն ինչ ուժեղ է 	<ul style="list-style-type: none"> Անգլերենով նյութերը անբավարար էին: Ներկայացում-սլայդների վրա շատ ժամանակ ծախսելը՝ փոխարեն հետազոտական աշխատանքների:
<ul style="list-style-type: none"> Գործնականներն ավելի շատ են, քան մյուս համալսարաններում Հաճելի, բարի ազնիվ վարչական աշխատակիցներ և կատարյալ դեկան, որոնք միշտ լսում են մեր հարցերը 	Պրակտիկա և պրակտիկա
<ul style="list-style-type: none"> Ընկերական անձնակազմ և դասախոսներ 	Կլինիկական փոխատեղում է հարկավոր, դժվար է գնալ 2 հիվանդանոց, երբեմն նաև համալսարան, պատրաստել PPT (շնորհանդես/ներկայացում) և ստանալ դրական գնահատական:

6. Եթե հնարավորություն ունենայիք, ապա ի՞նչը կփոխեիք համալսարանում

Պատասխաններ		f*
1.	Կվերանայեի մասնագիտական առարկաների ծրագրերը՝ տալով դրանց ավելի շատ գործնական ուղղվածություն	13
2.	Կներդնեի կրթության խրախուսման նոր ձևեր	4
3.	Կավելացնեի մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկը	4
4.	Կբարձրացնեի սովորողներին գիտական աշխատանքում ներգրավելու աստիճանը	8
5.	Կստեղծեի սովորողների ժամանցի և հանգստի համար ավելի հարմարավետ պայմաններ	4
6.	Կուժեղացնեի Համալսարանի գովազդը	4

Պատասխաններից կարելի է ենթադրել, որ ամենից հաճախ նշված գործոնը (f=13) վերաբերում է առարկայական դասընթացների ծրագրերին ավելի շատ գործնական ուղղվածություն հաղորդելուն: Հարցվածներից 8 պատասխան վերաբերում է հնարավորության դեպքում սովորողներին գիտական աշխատանքում ներգրավելու աստիճանի բարձրացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանավարտների կողմից իրականացվող անկախ գնահատումները թույլ են տալիս շարունակաբար բարձրացնել ուսումնական գործընթացի որակը, առանձնացնել ուսումնառության ուժեղ և թույլ կողմերը տարբեր տեսանկյուններից և ժամանակին արձագանքել մի շարք ուսումնական հիմնախնդիրներին, որոնք առաջանում են կրթական գործընթացների շրջանակներում:

Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք նշել, որ հարցմանը մասնակցել են 2020-2021 ուստարվա ԱԲՀ-ի բոլոր շրջանավարտները, հետևաբար հարցման արդյունքները ներկայացնում են ԱԲՀ շրջանավարտների բավարարվածության հնարավորինս ամբողջական պատկերը:

Հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ շրջանավարտներն ընդհանուր առմամբ բավարարված են համալսարանում ստացած կրթությունից: Հարցվողների մեծամասնությունը (81%-ը) ընդհանուր առմամբ ԱԲՀ-ում իր ստացած կրթությունից ամբողջությամբ բավարարված է և ավելի, քան բավարարված է, նրանք պատրաստ են մերձավորներին և ընկերներին խորհուրդ տալ ընդունվելու ԱԲՀ: Սակայն, պետք է լուրջ ուշադրություն դարձնել ապագա մասնագետներին գործնական գիտելիքների փոխանցմանը և պրակտիկ կարողությունների ձևավորմանը:

* f-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

Առաջարկվում է՝

1. Վերհանել կրթական ստորաբաժանումների գործունեության հիմնախնդիրները, բարձրացնել ներքին համագործակցության արդյունավետությունը:
2. ՄԿԾ-ների մշտադիտարկման ժամանակ վերանայել «Ավանդական բժշկության կրթամասի» դասընթացները և նրանց հատկացվող կրեդիտները:
3. Ավելացնել այն հիմնարար կենսաբժշկական առարկաների ժամաքանակները, որոնք նախապայման են մասնագիտական կլինիկական առարկաների ուսումնասիրման համար:
4. «Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հանդիպել եք ակադեմիական անազնվության դրսևորումների (դրամի դիմաց կամ բարեխոսությամբ ստացել եք գնահատական)» հարցադրմամբ 3.9 կետը կիրառել նաև ուսանողի կողմից դասախոսի և դասընթացների գնահատման շրջանակում անցկացվող հարցումների ժամանակ:
5. Եթե դասընթացը ժամանակին իրականացվել է հեռավար՝ համավարակի պայմաններից ելնելով, կլինիկական դասընթացներից կազմակերպել լրացուցիչ գործնական պարապմունքներ՝ ամառային ուսուցման ձևաչափով (summer classes):
6. Հաշվի առնելով այն, որ մեր շրջանավարտները կրթությունը շարունակում են կլինիկական օրդինատուրայում և ասպիրանտուրայում, հարցաթերթիկում ներառել «Ցանկանում եք շարունակել ուսումը, եթե այո, ապա՝ որտեղ» հարցադրումները: Տվյալները կօգտագործվեն հետագայում մշտադիտարկում իրականացնելիս:
7. Հարցաշարում ներառել նաև ուսումնական պլանի կազմման խնդիրները վերհանող հարցեր:
8. Ուսանողներին տրամադրել նյութերի անգլերեն մշակումներ, ինչպես նաև առաջարկել անգլերեն շտեմարաններ:
9. Ակտիվացնել ուսանողներին գիտական աշխատանքներում ներգրավվելու աշխատանքները: Այսօրվա մեր ուսանողը՝ ապագա պրակտիկ բժիշկը, պետք է ընդունակ լինի միջազգային կոնֆերանսներում իր գիտելիքները, աշխատանքի ընթացքում կուտակած փորձը ներկայացնել:
10. Կարևորել անհատական աշխատանքներ կատարելու բաղադրիչը, տեսաներկայացումներ և ռեֆերատներ կազմելու և զեկուցելու փորձը, կարևորը անկարևորից տարբերելու հմտությունը, անկաշկանդ և հակիրճ զեկուցելու ունակությունը:
11. Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին կազմակերպել ուսանողական կոնֆերանս, և դասախոսի գնահատմամբ ուսանողների արժանի աշխատանքները ներկայացնել, ստեղծել ժողովածու: Այս պարագայում ուսանողն էլ համապատասխան լրջությամբ կմոտենա անհատական աշխատանքի կատարմանը:
12. Հնարավորության սահմաններում իրականացնել լաբորատոր սենյակների կահավորում, ժամանակակից սարքերով և սարքավորումներով վերազինում: Դա կնպաստի գործնական պարապմունքներն առավել հետաքրքիր և ինտերկտիվ անցկացնելուն և առավել մեծ թվով ուսանողներ դասին ներգրավելուն:
13. Շարունակել գրադարանում մասնագիտական գրականության համալրումը՝ ապահովելով յուրաքանչյուր մասնագիտական առարկայից գրքերի առկայությունը:

Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

« 12 » _____ 03 _____ 2021թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀԱՐՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Ավանդական Բժշկության Համալսարանի (այսուհետ՝ ԱԲՀ) շրջանավարտների՝ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ հարցման նպատակը, անցկացման պարբերականությունը, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:
- 1.2. Հարցումներն անցկացվում են «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԱԲՀ-ի ռազմավարության պահանջների, ԱԲՀ-ի Մասնագիտության կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի հիման վրա:
- 1.3. Կանոնակարգը կիրառելի է ԱԲՀ-ի Ուսումնական մասի կողմից նախաձեռնած հարցումների շրջանակում և համարվում է կրթության որակի ներքին ապահովման գործընթացների բարելավման կարևորագույն բաղադրիչ:
- 1.4. Հարցումների նպատակն է կատարելագործել կրթական գործընթացները և ապահովել որակյալ կրթություն:

2. Հարցման անցկացումը

- 2.1. Հարցման գործընթացը կազմակերպում և վերահսկում է Ուսումնական մասը՝ յուրաքանչյուր տարվա ամփոփիչ ատեստավորման ավարտից անմիջապես հետո:
- 2.2. Հարցումն անանուն է և անցկացվում է թղթային, ինչպես նաև առցանց տարբերակով:
- 2.3. Թղթային տարբերակով հարցումն անցկացնելու դեպքում շրջանավարտները դիպլոմները ստանալիս ԱԲՀ-ի Ուսումնական մասից ստանում են հարցաթերթը, լրացնում և հանձնում Ուսումնական մաս¹:
- 2.4. Առցանց հարցման դեպքում շրջանավարտի համալսարանական էլեկտրոնային փոստին ուղարկվում է հարցաշարը և տրվում է մեկ շաբաթ ժամանակ այն լրացնելու համար:

¹ Ուսումնական մասը միաժամանակ գրադրվում է նաև ուսանողների կարիերայի հարցերով:

- 2.5. Շրջանավարտների հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում շրջանավարտը նշում է այն պատասխանը, որն առավել ճշգրիտ է արտացոլում իր կարծիքը:
- 2.6. Հարցաթերթն ունի կարծիքների և առաջարկությունների բաժին, որի արդյունքները մշակվում և ներկայացվում են որակական ցուցանիշներով:
- 2.7. Հարցաթերթում կատարված ուղղումները չեն հաշվարկվում:
- 2.8. Հարցմանը մասնակցած շրջանավարտների անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է, իսկ հարցման տվյալներն օգտագործվում են միայն ամփոփ ձևաչափով:

3. Հարցման արդյունքների մշակումը և օգտագործումը

- 3.1. Ուսումնական մասի կողմից անցկացված հարցման արդյունքները մշակվում են և վերլուծվում են որակի ապահովման մասնագետի, գործընթացին ներգրավված ստորաբաժանումների և ուսխորհրդի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս նպատակով կարող է ստեղծվել 2-5 հոգուց բաղկացած խումբ:
- 3.2. Շրջանավարտների կողմից կրթական ծրագրի գնահատման վերլուծության արդյունքները տրամադրվում են կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներին:
- 3.3. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի կողմից մեկ ամսվա ընթացքում հրավիրվում է նիստ՝ շահագրգիռ կողմերի հետ քննարկելու հարցման արդյունքները:
- 3.4. Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը քննարկման արդյունքների վերաբերյալ կազմում է բարելավման գործողությունների պլան և ներկայացնում Գիտխորհրդի քննարկմանը:
- 3.5. Շրջանավարտների կողմից կրթական ծրագրի գնահատման արդյունքների հիման վրա իրականացվող բարելավման գործողությունների ծրագրի նպատակային իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Որակի և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորը:
- 3.6. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է ԱԲՀ-ի պաշտոնական կայքում:
- 3.7. Գնահատված հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի՝ Ուսումնական մասում:

4. Եզրափակիչ դրույթներ

- 4.1. ԱԲՀ-ի հարցման կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում ԱԲՀ-ի Գիտական խորհուրդը:

4.2. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

Հավելված 2

**ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ
ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՅԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ
ՀԱՐՑԱԹԵՐԹ**

«___» _____ 20 թ.

Հարգելի՛ շրջանավարտ, ԱԲՀ-ն նպատակ ունենալով շարունակաբար բարելավել կրթության, մատուցվող կրթական ծառայությունների որակը, շրջանավարտների շրջանում անցկացնում է հարցումներ՝ կարևորելով Ձեր կարծիքը ԱԲՀ-ում ստացած կրթության որակից: Խնդրում ենք մասնակցել հարցմանը, որի գաղտնիությունը երաշխավորվում է: Ակնկալվում է Ձեր անկեղծ օժանդակությունն այս գործընթացում:

Հարցերի Ձեր նախընտրած տարբերակները Դուք կարող եք նշել որևէ պայմանական նշանով (շրջանակ, գումարման կամ V-նշում և այլն):

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Ձեր սեռը _____

2.2. Ձեր տարիքը

- 18-23
- 24-29
- 30-35
- 35-ից բարձր

2.3. Նշեք՝ ո՞ր ֆակուլտետում եք սովորել

- Ստոմատոլոգիական
- Բուժական գործ

2.4. Նշեք Ձեր մասնագիտությունը և որակավորումն ըստ դիպլոմի

2.5. Ո՞ր թվականին եք ավարտել ԱԲՀ-ն

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ

2.1. Ձեզ համար պա՞րզ էր կրթական ծրագրի նպատակը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.2. Ձեզ համար պա՞րզ էին ու հասկանալի կրթական ծրագրի վերջնարդյունքները (այսինքն, ինչ պետք է իմանայիք, կարողանայիք անել ուսումնառության ավարտին)։

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.3. Դասընթացների նպատակը և խնդիրները Ձեզ ներկայացվե՞լ են հստակ.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.4. Ձեզ համար պա՞րզ էր, թե ինչ էին ակնկալում ձեզանից դասախոսները.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.5. Դասընթացի ծրագրում ներառված տեսական և գործնական պարապմունքների բաշխվածությունը բավարարե՞լ է առարկայի արդյունավետ յուրացմանը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.6. Ուսումնառությունը Համալսարանում նպաստե՞լ է տեսական գիտելիքների ձեռքբերմանը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.7. Ուսումնառությունը Համալսարանում նպաստե՞լ է մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.8. Դասախոսներից ստացած հետադարձ կապը օգնե՞լ է Ձեզ բարելավելու Ձեր գիտելիքներն ու կարողությունները.

- Այո
- Ոչ

Մասամբ՝ այո

Դժվարանում եմ պատասխանել

2.9. Մտացել էք անհրաժեշտ աջակցություն Ձեր կրթական կարիքների վերհանման և բավարարման նպատակով.

Այո

Ոչ

Մասամբ՝ այո

Դժվարանում եմ պատասխանել

2.10. Ուսումնառությունը ԱԲՀ-ում նպաստել է Ձեր կլինիկական մտածելակերպի ձևավորմանը.

Այո

Ոչ

Մասամբ՝ այո

Դժվարանում եմ պատասխանել

2.11. Ուսումնառությունը Համալսարանում զարգացրել է Ձեր հաղորդակցական և կազմակերպչական կարողությունները

Այո

Ոչ

Մասամբ՝ այո

Դժվարանում եմ պատասխանել

2.12. Ինչպե՞ս եք գնահատում պրակտիկաների օգտակարությունը.

Գերազանց

Լավ

Բավարար

Անբավարար

Դժվարանում եմ պատասխանել

2.13. Ձեզ հետաքրքրի՞ր էին մասնագիտության կրթական ծրագրի «Ավանդական բժշկություն» կրթամասում ներառված առարկաները («Ֆիտոթերապիա», «Ասեղ-այրում թերապիա»,...).

Այո

Ոչ

Մասամբ՝ այո

Դժվարանում եմ պատասխանել

2.14. Որքանով եք բավարարված մասնագիտության կրթական ծրագրի «Ավանդական բժշկություն» կրթամասում ներառված առարկաների դասավանդումից («Ֆիտոթերապիա», «Ասեղ-այրում թերապիա»,...).

Այո

Ոչ

Մասամբ՝ այո

Դժվարանում եմ պատասխանել

2.15. Ըստ տարիների համաչափ էր բաշխված ուսանողի ուսումնական բեռնվածությունը (study load՝ ուսանողի ծանրաբեռնվածությունը հասանելի էր, իրատեսական էին առաջադրանքների կատարման ժամկետները, ...).

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.16. Ուսումնառության ընթացքում օբյեկտի՞վ են գնահատվել ուսանողների գիտելիքները.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.17. Գիտելիքների ստուգման և գնահատման տարբեր ձևերը (գրավոր, բանավոր, առաջադրանքներ, ընթացիկ ստուգումները) նպաստե՞լ են դասընթացի ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերմանը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

2.18. Ինչպես կգնահատեք ընդհանուր առմամբ գիտելիքների գնահատման համակարգը.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

2.19. Ինչպե՞ս եք գնահատում ամփոփիչ ատեստավորման գնահատականի անաչառությունը.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԱԲՀ –Ի ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻՑ

3.1. Ինչպե՞ս եք գնահատում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան (լսարաններ, լաբորատորիաներ, մասնագիտական սենյակներ, նախակլիինիկական սենյակ, գրադարան, ուսումնառության այլ ռեսուրսներ).

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

3.2. Ինչպե՞ս եք գնահատում մասնագիտական գրականության առկայությունը գրադարանում.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

3.3. Ինչպե՞ս եք գնահատում Ինտերնետ ռեսուրսների առկայությունը Համալսարանում.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

3.4. Ինչպե՞ս եք գնահատում ուսումնական լաբորատոր սարքավորումների և նյութերի առկայությունը.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

3.5. Ի՞նչը կոնկրետ ձեզ չի բավարարել ուսումնական գործընթացի կազմակերպումը կապված նյութատեխնիկական բազայի հետ.

3.6. Ինչպե՞ս կգնահատեք ընդհանուր առմամբ համալսարանի դասավանդման մակարդակը.

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ գնահատել

3.7. Ի՞նչը կոնկրետ Ձեզ չի բավարարել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքում.

3.8. Գո՞հ եք արդյոք

ա/ ԱԲՀ-ի ղեկավարությունից

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

բ/ Պրոֆեսորադասախոսական կազմից

- Այո

- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

գ/ Ուսանողական խորհրդի կառույցներից (ՈւՆ, ՈւԳԸ)

- Գերազանց
- Լավ
- Բավարար
- Անբավարար
- Դժվարանում եմ պատասխանել

3.9. Արդյո՞ք ուսումնառության ընթացքում հանդիպել եք ակադեմիական անազնվության դրսևորումների (դրամի դիմաց կամ բարեխոսությամբ (հովանավորչությամբ) ստացել եք գնահատական).

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

3.10. Արդյո՞ք հստակ և թափանցիկ են ուսանողների դիմումների և բողոքների արտահայտման ընթացակարգերը և մեխանիզմները.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

3.11. Կարևոր՞ մ էք համալսարանում սովորելիս հանրակացարանի առկայության խնդիրը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4.1. Արդյո՞ք հասանելի՞ էր Ձեզ ԱԲՀ ընդունվելու և սովորելու վերաբերյալ տեղեկատվությունը.

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

4.2. Համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը համապատասխանո՞ւմ է իրականությանը

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

5. ԱԲՀ-ՈՒՄ ՍՏՄԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

5.1. Որքանո՞վ եք բավարարված ԱԲՀ-ից ստացած կրթությունից.

- Ամբողջությամբ բավարարված եմ
- Ավելի, քան բավարարված եմ
- Բավարարված չեմ
- Ավելի, քան բավարարված չեմ
- Դժվարանում եմ պատասխանել

5.2. Համալսարանից ստացած կրթության վերաբերյալ Ձեր մեկնաբանությունները. /Բավարարված եմ, քանի որ.....:

ԱԲՀ-ի կրթական համակարգը ունի որոշակի:

Պրակտիկ դասընթացները.....:

Գործնական գիտելիք ստանալու մակարդակը.....:

Մասնագիտական առարկաները՝ գիտելիքների մեծ բազա...:/:

5.3. Խորհուրդ կտա՞ք ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԱԲՀ

- Այո
- Ոչ
- Մասամբ՝ այո
- Դժվարանում եմ պատասխանել

5.4. Նշեք ԱԲՀ-ում ստացած կրթության ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ կողմերը

Թույլ կողմերը

6. ԵԹԵ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱՅԻՔ, ԱՊԱ ԻՆՉՐ ԿՓՈԽԵԻՔ ԲՈՒՀՈՒՄ

1.	Կվերանայելի մասնագիտական առարկաների ծրագրերը՝ տալով դրանց ավելի շատ գործնական ուղղվածություն	
2.	Կներդնելի կրթության խրախուսման նոր ձևեր	
3.	Կավելացնելի մասնագիտությունների և մասնագիտացումների ցանկը	
4.	Կբարձրացնելի սովորողներին գիտական աշխատանքում ներգրավելու աստիճանը	
5.	Կստեղծելի սովորողների ժամանցի և հանգստի համար ավելի հարմարավետ պայմաններ	

6.	Կուժեղացնելի Համալսարանի գովազդը	
Այլ(ևշեկ)		

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար